ԿԱՐԾԻՔ

ՔՐԻՍՏԻՆԵ ԱՐԱՅԻ ԲԱԲԱՅԱՆԻ՝ «ԻՍՊԱՆԵՐԵՆԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱՄԱԿԱՐԳԸ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ՝ ԺԳ. 00.02 «ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» /ԻՍՊԱՆԵՐԵՆ/ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

Գրախոսվող սույն աշխատանքը բովանդակում է այնպիսի մի կարևոր հիմնախնդիր, ինչպիսին է «Իսպանիայի երկրագիտություն» դասընթացի կազմակերպման, նախագծման տեսությունների, մեթոդաբանական մոտեցումների ու հայեցակարգերի դիտարկմամբ իսպաներեն երկրագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման արդյունավետ մեթոդական համակարգի մշակումն ու կիրառումը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվում են կիրառված վերլուծական ընթացակարգերով, դրանց ընտրության և հիմնավորման մեթոդաբանությամբ: Փորձարարական ուսուցման արդյունքները հաստատում են ստեղծված կաղապարի արդյունավետությունը, որի արդիականությունը պայմանավորված է նաև հետևյալ առաջադրված խնդիրների կարևորմամբ.

1. Ուսումնասիրել իսպաներենի երկրագիտական դասընթացի բառապաշարին վերաբերող համապատասխան գրականությունը՝ հստակեցնելով և սահմանելով առավել գործածական հասկացություններն ու եզրույթները:

3. Հիմնավորել իսպաներեն երկրագիտական բառապաշարի համալիր ուսուցման անհրաժեշտությունն օտար լեզուների ֆակուլտետներում:

4. Մշակել իսպաներենի երկրագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման արդյունավետ մեթոդական համակարգ:

Ատենախոսությունը ներառում է ներածություն, երկու գլուխ, եզրակացություն, գրականության ցանկ և հավելված:

Ներածության մեջ հստակ սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները: Հեղինակին հաջողվել է օբյեկտիվորեն ձևակերպել հետազոտության

Scanned with CamScanner

գիտական վարկածը, նորույթը, օբյեկտը, առարկան, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանության ներկայացված դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում՝ «ԼԵԶՎԱԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԿԱՆ ԲՈՒՀՈՒՄ» վերտառությամբ, հեղինակը հանգամանորեն քննության է առնում Իսպանիայի երկրագիտության դասընթացի առանձնահատկությունները՝ միջառարկայական ու ներառարկայական կապերի կարևորության հաշվառմամբ: Ատենախոսի ուսումնասիրության կենտրոնում են տվյալ դասընթացի բաղադրամասերը, ուսուցման հիմնական մեթոդները, մոտեցումներն ու սկզբունքները: Այս համատեքստում հեղինակն անդրադարձել է նաև էթնոմշակութային իրակությունների ուսուցման և յուրացման հիմնախնդրին՝ շեշտադրելով վերջինիս կարևորությունը ուսանողների հենքային գիտելիքների ձևավորման գործում: Ատենախոսն իրավացիորեն նշում է, որ երկրագիտության դասընթացը պետք է կազմակերպել մշակույթների երկխոսության համատեքստում և անհրաժեշտ է տիրապետել ոչ միայն լեզվական միջոցների, այլ նաև հենքային գիտելիքների, հասնել նրան, երբ ուսանողները կսկսեն մտածել ուսուցանվող լեզվով՝ յուրացնելով ոչ միայն խոսքային, այլև ոչ խոսքային արտահայտչամիջոցներ: Այսպիսով, օտար լեզվով հաղորդակցական կարողունակության զարգացման գործում սոցիալ-մշակութային և երկրագիտական ուղղվածություն ունեցող գիտելիքների ձեռքբերումն առանցքային է: Գովելի է, որ հեղինակի կողմից առաջնային են դիտվում երկխոսական, քննադատական մտածողության զարգացմանն ուղղված վարժությունները, նախագծերը, խնդրահեն առաջադրանքները: Աշխատանքի առավելություններից է նաև այն, որ Ք. Բաբայանը երկրագիտական բառապաշարի ուսուցման հիմնախնդիրը դիտարկելիս անդրադարձ է կատարել նաև մեթոդական տիպականացմանը, որի շրջանակում խնամքով վերլուծվել են միջլեզվական և միջմշակութային փոխներթափանցման երևույթները և այլ գործոններ, որ կարող են օգնել կամ դժվարացնել խսպաներեն երկրագիտական բառապաշարի յուրացման գործընթացը:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «ԻՍՊԱՆԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԻՋՈՑՈՎ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ» վերտառությամբ, հեղինակն առաջարկում է իսպաներենի երկրագիտական

Scanned with CamScanner

բառապաշարի ուսուցման արդյունավետ կաղապարներ: Կարևորվում է տարածաշրջանային բաղադրամասին վերաբերող հասկացությունների, եզրույթների, ինչպես նաև տեղանունների ճիշտ արտասանության ուսուցումը՝ ընդգծելով այս համատեքստում մայրենի լեզվի փոխներթափանցման կանխարգելման անհրաժեշտությունը, ինչպես նաև միջլեզվական փոխադրման դրական ներգործությունը:

Հետազոտությունն ավարտվում է իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգի արդյուավետության փորձարարական հիմնավորմամբ, որի շրջանակներում ատենախոսն իրականացրել է փորձարարական ուսուցում՝ պարզելու, թե որքանով են ընտրված վարժություններն ու տեքստերը նպաստում ուսանողների առաջադիմությանը: Ստացված տվյալների վիճակագրական վերլուծությունը ցույց է տալիս ատենախոսի կողմից մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Արժևորելով Ք. Բաբայանի աշխատանքը՝ կցանկանայինք նշել որոշ դիտարկումներ.

1. Աշխատանքում ներկայացնելով իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդները, հեղինակը նշում է նաև նախագծային մեթոդն ու խճանկարը: Կարծում ենք՝ աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը այս մեթոդները լուսաբաներ՝ ներկայացնելով նաև իր կողմից մշակված կամ ընտրված առաջադրանքներ, վարժություններ համապատասխան երկրագիտական թեմայի կամ տեքստի շրջանակում:
2. Ցանկալի կլիներ, որ գիտափորձի արդյունքները վերլուծելիս հեղինակը հանգամանորեն անդրադառնար ուսանողների կողմից թույլ տված սխալներին և դրանց վերլուծությանը:
3. Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակն իրավացիորեն նշում է «թարգմանչի կեղծ բարեկամներ»-ի բացասական ներգործությունն իսպաներեն երկրագիտական բառապաշարը յուրացնելիս: Արդյունավետ կլիներ, եթե ատենախոսը համապատասխան օրինակներով հստակեցներ իր դիտարկումը տվյալ խնդրի վերաբերյալ:
4. Կարծում ենք՝ հետազոտությունն առավել ամբողջական և արդիական կլիներ, եթե հեղինակն ընտրեր ժամանակակից բնագիր տեքստեր և յուրաքանչյուր տեքստի

Scanned with CamScanner

շրջանակում համակարգված ներկայացներ վարժություններ ու գործնական առաջադրանքներ համապատասխան տարբերակներով՝ ռեցեպտիվ, պրոդուկտիվ և փոխներգործուն:

5. Առաջարկում ենք՝ «իրազեկություն» և «կոմպետենցիա» բառերը փոխարինել «կարողունակություն» եզրույթով, օրինակ՝ լեզվահաղորդակցական կարողունակություն, բառապաշարային կարողունակություն և այլն:
6. Աշխատանքում, ներառյալ հավելվածում առկա են որոշ տեխնիկական վրիպակներ, բացթողումներ, որոնք վերանայման կարիք ունեն:

Ընդհանուր առմամբ՝ սույն ատենախոսությունը համապատասխանում է գիտական աշխատանքի պահանջներին, ունի տեսական և կիրառական արժեք և կարող է օգտակար լինել ինչպես ուսանողների ու դասախոսների, այնպես էլ երկրագիտության ոլորտի մասնագետների համար:

Աշխատանքը բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին ներկայացվող ՀՀ ԲԿԳԿ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջները, ուստի Քրիստինե Արայի Բաբայանն արժանի է հայցվող ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» /իսպաներեն/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Սուսաննա Ասատրյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մասնագետի (Սուսաննա Պարգևի Ասատրյան) ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ԲՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՓԻԼԱՎՋՅԱՆ

Scanned with CamScanner